ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
<<ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊՈԱԿ

• ք. Երևան« Փ.Բուզանդ 1/3
• г. Ереван, ул. Бузанда 1/3
• 1/3, Buzand st. Yerevan
• www. expertise@env.am

հեռ. (374 011) 220-218
Тел. (374 011) 220-218
Tel. (374 011) 220-218

Խ/ԴՓ-26/2679

«18» 04 2025թ.

Գեղարքունիքի մարզի
Գավառ համայնքի ղեկավար
պարոն Գուրգեն Մարտիրոսյանին

Հարգելի պարոն Մարտիրոսյան

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի՝ 2025 թվականի ապրիլի 29-ին՝ ժամը 12:00-ին, Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կկայանա «ԲԱՅԱԶԵՏ ՍԱՆԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության և աշխատանքային նախագծի վերաբերյալ հանրային լսում (2-րդ լսում)։

Խնդրում եմ աջակցել և ապահովել ազդակիր համայնքի/բնակավայրի շահագրգիռ հանրության և համապատասխան մասնագետների մասնակցությունը հանրային լսմանը։

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում (www.env.am), համայնքապետարանի և նախաձեռնողի (առկայության դեպքում) պաշտոնական կայքերում։ Տեղեկատվություն ստանալու և առաջարկություններ ներկայացնելու համար դիմել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին (հասցե՝ ք. Երևան, Բուզանդի 1/3, էլ.փոստ՝ (envexpertise@env.am)։

Հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունը, առկայության դեպքում՝ նաև շահագրգիռ հանրության կարծիքները, դիտողությունները և առաջարկություններն օրենսդրությամբ սահմանված կարգով՝ կտեղադրվեն լիազոր մարմնի պաշտոնական կայքում։

Առդիր՝ 1 նիշք։

Տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ, Սուսաննա Անտոնյան, 095 22-02-19

ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՈՒՏՔ № 1338
«18» 04 2025 թ.